

**«ՎԱՆԱԶՈՐԻ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

**«Հաստատում եմ»
ՎՊՄԻ-ի ռեկտոր**

_____ Խաչատրյան Գ.Կ.
«04 » __ 04 _____ 2012թ.

**ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՄԱՆ
ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

Ընդունվել է ՎՊՄԻ ՊՈԱԿ գիտխորհրդում

(արձանագրություն թիվ 4. “_04_” __04_____ 2012թ.)

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն ռազմավարությունը (այսուհետ՝ Ռազմավարություն) մշակվել է համաձայն «Եվրոպական կրթական տարածքում որակի ապահովման չափանիշներ և առաջարկներ»-ի (1) և «Եվրոպայի բարձրագույն կրթության տարածքի կառույցների կարգաբերում» նախագծի (2), «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» ՀՀ օրենքների, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի (2005 թ.) հոդված 26-ի 5-րդ կետի և ՀՀ Կառավարության 2005 թ. դեկտեմբերի 27-ի թիվ 2307-Ն «ՀՀ բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգի ներդրման մասին» որոշման, ինչպես նաև Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի (այսուհետ՝ Ինստիտուտ) կանոնադրության և հիմնված է Ինստիտուտի, ՀՀ և ԱՊՀ այլ երկրների բարձրագույն ուսումնական հաստատություններում ընդունված և կիրառվող կանոնակարգերի և կարգերի, ինչպես նաև Ինստիտուտի առաքելության վրա:

1.2. Ինստիտուտի զարգացման գերակա ուղղություններն են կրթության որակի արդյունավետ համակարգի ստեղծումը, որակի կորպորատիվ մշակույթի ձևավորումը և «կրթություն-գիտություն-նորարարություն» եռամիասնության զարգացումը:

Ելնելով այդ գերակա ուղղություններից՝ Ինստիտուտի զարգացման տեսլականն է.

- ձգտել 2015թ դառնալու Հայաստանի Հանրապետության կրթության բնագավառում միջազգային չափանիշներին բավարարող, բարձրորակ մասնագետներ պատրաստող, ժամանակակից գիտական հետազոտություններ, մշակումներ, սոցիալ-մշակութային և լուսավորական գործունեություն իրականացնող առաջադեմ հաստատություն:

Այս տեսլականի ներքո իրականացվելիք առաքելություններն են՝

1. ձևավորել Ինստիտուտի կայուն զարգացումն ապահովող համակարգ,
2. ձևավորել միասնական մոտեցում Ինստիտուտի՝ Եվրոպական միացյալ կրթական տարածքում ներգրավվելու, 21-րդ դարի մարտահրավերներին դիմակայելու և նույնական պատասխան տալու, ապագա մարդ-քաղաքացու կրթության և դաստիարակության խնդիրները պատշաճ կերպով լուծելու նպատակով (Հավելված 1):
3. աջակցել արհեստավարժ, սոցիալապես ինքնահաստատված քաղաքացու կայացմանը, որն ի զորու է ակտիվ մասնակցություն ունենալու Հայաստանի Հանրապետության զարգացման ռազմավարական խնդիրների լուծմանը, ժողովրդավարական հասարակարգի կայացմանը:

1.3. Որակի ապահովման ներբուհական համակարգի գործունեության կարևորագույն տարրերից մեկը ուսումնական գործընթացում ներդրված մասնագիտության կրթական ծրագրերի որակի անընդհատ բարձրացման կայուն գործընթացի առկայությունն է: Մասնագիտության կրթական ծրագրերի որակի բարձրացման նման մակարդակը նպաստում է Բոլոնյան գործընթացի հիմնական սկզբունքներից մեկի՝ բարձրագույն կրթության եվրոպական տարածքում մասնագիտացումների փոխձանաչման համակարգի ստեղծմանը:

Հետևաբար, մասնագիտության կրթական ծրագրերի համատեղելիության, համադրելիության և թափանցիկության ձեռքբերումը, նրանց համապատասխանումը եվրոպական չափանիշների պահանջներին նոր կրթական մոդելի արդիական հիմնախնդիրներից է: Համաձայն մասնագիտության կրթական ծրագրերի որակին ներկայացվող Բոլոնյան գործընթացի պահանջների՝ յուրաքանչյուր ծրագիր պետք է համապատասխանի հասարակության և աշխատաշուկայի պահանջներին, ընդունվի

գիտակրթական հանրության կողմից, ունենա բավականաչափ թափանցիկ կառուցվածք, որը թույլ կտա համադրել այն այլ բուհերի ծրագրերի հետ՝ այդպիսով ապահովելով ուսանողների շարժունությունը և այլ երկրներում ուսուցման արդյունքների ճանաչումը: Բացի դրանից, մասնագիտության կրթական ծրագիրը պետք է լինի հասկանալի, ընդունելի և գրավիչ ուսանողների համար:

1.4. Բոլոնյան հռչակագրի ստորագրումից հետո ի հայտ եկան մեծաթիվ փաստաթղթեր և նախաձեռնություններ, որոնց նպատակն էր նպաստել Բոլոնյան գործընթացի հիմնական գերակա նպատակի՝ միացյալ եվրոպական կրթական տարածքի ձևավորմանը: Դրանց թվում էր «Եվրոպայում կրթական կառուցվածքների կարգաբերումը» («Tuning Learning Structures in Europe») նախագիծը, որը մեկնարկեց 2003թ-ին Եվրահանձնաժողովի աջակցությամբ: Թյունինգ-մեթոդաբանությունը ենթադրում է կրթական հարացույցի արմատական փոփոխություն և կրթական աստիճանները որոշելու գործում համաեվրոպական համաձայնության ձեռքբերում:

Թյունինգ-մեթոդաբանությունը պահանջում է բոլոր մասնագիտությունների կրթական ծրագրերի կողմնորոշումը.

- դեպի ուսանողը՝ որպես կրթական գործընթացի ակտիվ գործող անձի (stakeholder),
- դեպի գործատուն՝ ներկայիս աշխատաշուկայում պահանջարկ վայելող շրջանավարտի որակը որոշելու և ապագայի համար աշխատաշուկայի պատվերի և սոցիալական պահանջարկի կանխատեսման նպատակով,
- դեպի վերջնական արդյունք (learning outcome),
- դեպի կոմպետենցիաներ, որոնք անհրաժեշտ են շրջանավարտին աշխատաշուկայում մրցունակ լինելու համար:

Այսպիսով, բոլոր գործող և նոր ստեղծվող կրթական ծրագրերը կարիք ունեն վերամշակման՝ հետևյալ հայեցակարգային սկզբունքների հիման վրա.

- կոմպետենցիաների վրա հիմնված և ուսանողակենտրոն մոտեցման,
- կրթության բազմամակադակության,
- մասնագիտության կրթական ծրագրերի շարունակականության և փոփոխականության,
- մասնագիտության կրթական ծրագրերի համապատասխանությանը շուկայական պահանջներին և սոցիալական կարիքներին,
- գիտության, կրթության և նորարարությունների ինտեգրման,
- կրթության որակի ապահովման նոր տեխնոլոգիաների,
- ժամանակակից տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրման՝ ուսումնական գործընթացում և ուսանողի գիտելիքների գնահատման համակարգում սուբյեկտիվ մոտեցումը և կոռուպցիոն ռիսկերը նվազագույնի հասցնելու նպատակով,
- քաղաքացիական կրթության նոր ձևերի ներդրման և այլն:

2. Մասնագիտության կրթական ծրագրերի մշակման նպատակը և խնդիրները

Սույն ռազմավարության նպատակն է նկարագրել որակի ապահովման ներկառուցված համակարգով մասնագիտության կրթական ծրագրերի մշակման, ներդրման, հաստատման, գնահատման, մշտադիտարկման, ներքին և արտաքին փորձաքննության և պարբերական վերանայման մեխանիզմները՝ Թյունինգ-մեթոդաբանության համաձայն:

Այս նպատակը ենթադրում է հետևյալ **խնդիրների** լուծում.

- մասնագիտության կրթական ծրագրերի որակի բարձրացման առաջավոր փորձի ուսումնասիրում, վերլուծություն և ամփոփում (բենչմարքինգ), Թյունինգ-մեթոդաբանության յուրացում,
- մասնագիտության կրթական ծրագրերի որակին ներկայացվող նորարարական պահանջների և ECTS հենքով գնահատման համակարգի վերաբերյալ դասախոսական կազմի իրազեկության բարձրացում,
- գործատուների ներգրավում մասնագիտության կրթական ծրագրերի որակի ապահովման գործընթացում,
- մասնագիտության կրթական ծրագրերի ակտիվ մասնակիցների (stakeholder)՝ ուսանողների և շրջանավարտների ներգրավում կրթական ծրագրերի որակի բարձրացման գործընթացներում,
- յուրաքանչյուր մասնագիտության համար տարբեր մակարդակների ցուցիչների և ընդհանուր (գործիքային, միջանձնային և համակարգային) ու մասնագիտական կոմպետենցիաների մշակում,
- ուսանողների՝ դասընթացների (մոդուլների) յուրացման միջանկյալ և վերջնական ձեռքբերումների գնահատման մեթոդների մշակում,
- ուսումնական ծրագրերի պլանավորման, առաջադրման, մշակման, հաստատման, իրականացման, որակի մոնիթորինգի, գնահատման և պարբերական վերանայման ընթացակարգերի ներդրում,
- ուսումնամեթոդական փաթեթի մշակում՝ ներառյալ տվյալ մասնագիտության առանձին առարկաների, մոդուլների/դասընթացների ուսումնական ծրագրերը՝ վերջնական արդյունքների/կոմպետենցիաների հստակ շարադրմամբ,
- նորարարական կրթական տեխնոլոգիաների և ինտերակտիվ մեթոդիկաների մշակում և փորձարկում՝ իրականացվող ծրագրի որակն ապահովելու նպատակով,
- մասնագիտության կրթական ծրագրերի որակի ապահովման և վերահսկման (մշտադիտարկում, վերանայում, նորացում) մեխանիզմների մշակում և ներդրում:

3. Մասնագիտության կրթական ծրագրերի մշակման ռազմավարական գործողություններ

Վերոնշյալ խնդիրները լուծելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել հետևյալ գործողությունները.

1. Որակի ապահովման ներկառուցված համակարգով կրթական ծրագրերի մշակման և Թյունինգ-մեթոդաբանության ուսումնասիրում, վերլուծություն և ամփոփում:
2. Մասնագիտության կրթական ծրագրի պլանավորման, մշակման, իրագործման և պարբերական մոնիթորինգի փուլերում ծրագրի որակի վրա ազդող կարևոր գործոնների բացահայտում:
3. Տվյալ մասնագիտության կրթական ծրագրով մասնագետների պատրաստման անհրաժեշտության հիմնավորում (խորհրդատվություններ բոլոր շահագրգիռ կողմերի հետ՝ մասնագիտական և ակադեմիական հանրություն, գործատուներ, շրջանավարտներ, Լոռու մարզի և Վանաձոր քաղաքի կրթության վարչության պատասխանատուներ):
4. Արտաքին շահագրգիռ կողմերի (գործատուներ, ակադեմիական հանրություն, բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողներ, շրջանավարտներ, Լոռու մարզի և Վանաձոր քաղաքի կրթության վարչության պատասխանատուներ) ներգրավում կրթական ծրագրերի մշակման և որակի ապահովման գործընթացներում.

- կլոր սեղանների անցկացում,
 - ֆոկուս-խմբերի անցկացում (Հավելված 2),
 - քանակական և որակական հարցումների անցկացում (Հավելված 3):
5. Բուհի դասախոսների համար կլոր սեղանների, խորհրդատվությունների, սեմինարների անցկացում՝ նորարարական մոտեցումների վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացման նպատակով:
 6. Մագիստրատուրայի և բակալավրիատի ուսանողների, շրջանավարտների ներգրավում մասնագիտության կրթական ծրագրերի մշակման և որակի ապահովման գործընթացներում.
 - կլոր սեղանների անցկացում,
 - ֆոկուս –խմբերի անցկացում (Հավելված 2),
 - քանակական և որակական հարցումների անցկացում (Հավելված 3):
 7. Անհրաժեշտ ռեսուրսների նկարագրություն (դասախոսական կազմ, ենթակառուցվածքներ, տեղեկատվական ռեսուրսների որակ և քանակ, նյութատեխնիկական բազա):
 8. Բոլոր մասնագիտություններին համապատասխանող ընդհանուր (գործիքային (ԳԿ), միջանձնային (ՄՁԿ) և համակարգային (ՀԳԿ)) ու առարկայական (մասնագիտական) (ԱԿ) կոմպետենցիաների և ցուցիչների մշակում (Հավելված 4):
 9. Առանձին մոդուլների վերջնարդյունքների գնահատման շեմային չափանիշների մշակում՝ արտահայտված կրեդիտային միավորներով:
 10. Առանձին մոդուլներից/դասընթացներից ուսանողների ձեռքբերած կրթական արդյունքների գնահատման առավելագույն արդյունավետ մոդելների մշակում:
 11. Մասնագիտության կրթական ծրագրերում նորարարական տեխնոլոգիաների (ներառյալ մուլթիմեդիա- և տեղեկատվական-հաղորդակցական) մշակում և ներդրում:
 12. Ուսանողների ձեռքբերումները **ձևավորող** (formative՝ հետադարձ կապի ապահովման համար) և **գումարային** (summative՝ դասընթացի կամ առանձին մոդուլի) գնահատման ձևերի մշակում և ներդրում:
 13. Մասնագիտության կրթական ծրագրի մոնիթորինգի, գնահատման և վերանայման պարբերականության ընթացակարգերի որոշում:
 14. Թյունինգ-մեթոդաբանությանը համապատասխանող առանձին մասնագիտությունների կրթական ծրագրերի կազմում՝ ըստ հետևյալ սխեմայի.
 - ծրագրի ուղղվածությունը (նպատակը, խնդիրները), նկարագրությունը,
 - ծրագրի վերջնական արդյունքները՝ ընդհանուր և բուն մասնագիտական կոմպետենցիաների տեսքով,
 - բակալավրերի և մագիստրանտների միջանկյալ և վերջնական ձեռքբերումների գնահատման մեթոդները,
 - որակի վերահսկման ապահովման մեխանիզմները:
 15. Մասնագիտության կրթական ծրագրերի մշակման ընթացքի և յուրաքանչյուր փուլի արդյունքների քննարկում՝ համապատասխան ամբիոնների, ֆակուլտետների խորհուրդների, Ինստիտուտի գիտական խորհրդի նիստերին:
 16. Ուսումնամեթոդական փաթեթի մշակում՝ ներառյալ ECTS կրեդիտային համակարգի հիման վրա կազմված ուսումնական պլանները՝ բոլոր դասընթացների/մոդուլների համար վերջնական արդյունքների/կոմպետենցիաների հստակ շարադրմամբ:

17. Մշակված մասնագիտության կրթական ծրագրերի և ուսումնամեթոդական փաթեթների ներքին և արտաքին փորձաքննություն, անհրաժեշտ ուղղումների կատարում:

4. Մասնագիտության կրթական ծրագրին ներկայացվող պահանջներ

Մշխատաշուկայում մրցունակ շրջանավարտի մասնագիտական պատրաստման ամենաարդյունավետ ուղին որակի ապահովման ներկատուցված համակարգով մասնագիտության կրթական ծրագրերի (ՄԿԾ) մշակումը և իրականացումն է:

Մասնագիտության կրթական ծրագիրը (ՄԿԾ) ուսումնական գործընթացի նպատակները, ակնկալվող արդյունքները, բովանդակությունը, իրականացման պայմանները և տեխնոլոգիաները, շրջանավարտի պատրաստվածության որակի գնահատումը կանոնակարգող փաստաթղթերի փաթեթ է:

Նախքան ՄԿԾ-ի մշակումը բուհը որոշում է իր ծրագրի հիմնական նպատակը՝ առաքելությունը, որում հաշվի է առնվում նրա առանձնահատկությունները, սովորողների խմբերի բնութագրերը և ուսուցման վերջնարդյունքները՝ գիտելիքների, կարողությունների և հմտությունների համաշարի տեսքով, ընդ որում՝ դրանք հասցված են մասնագիտական գործունեության գործնական իրադրություններում ինքնուրույն վճիռներ ընդունելու կարողությունների ձևավորման հիմքում ընկած կոմպետենտությունների աստիճանի:

Բուհը պարտավոր է ժամանակ առ ժամանակ նորացնել մասնագետի պատրաստման ՄԿԾ-ի բաղադրիչները՝ հաշվի առնելով գիտության, տեխնիկայի, մշակույթի, տնտեսության, տեխնոլոգիաների և սոցիալական ոլորտի զարգացման ուղղընթացները՝ այս բոլորի հիմքում դնելով.

- մասնագետների պատրաստման որակի ապահովման ռազմավարությունը,
- մասնագիտության կրթական ծրագրերի մոնիթորինգը,
- սովորողների գիտելիքների և կարողությունների, ինչպես նաև շրջանավարտների կոմպետենտությունների գնահատման օբյեկտիվ շուրջընթացների կազմակերպումը,
- դասախոսական անձնակազմի կոմպետենտության ապահովումը,
- սեփական գործունեությունը գնահատելու և այլ կրթական հաստատությունների հետ համադրվելու նպատակով մշտազնա ստուգումը՝ համաձայնեցված հայտանիշների հետ:

Մասնագիտության կրթական ծրագրերը վերանայվում են ոչ ուշ, քան 4 տարին մեկ անգամ բակալավրիատի համար և 2 տարին մեկ՝ մագիստրատուրայի համար: Մասնագիտության կրթական ծրագրերի մեջ արված փոփոխությունները և լրացումները վերանայվում են մեթոդական հանձնաժողովի կողմից, և արդյունքները ձևակերպվում են ամբիոնի նիստի արձանագրության քաղվածքի մեջ:

5. Մասնագիտության կրթական ծրագրերի կառուցվածքը և բովանդակությունը

Յուրաքանչյուր մասնագիտության կրթական ծրագիր պիտի ներառի հետևյալ բաղադրիչները.

5.1. ՄԿԾ-ի բնութագիրը՝ անվանումը, կրթության ուղղությունը, ուղղվածությունը, նպատակը, խնդիրները, շրջանավարտի մասնագիտացումը,

ուսուցման ժամկետները, աշխատանքային բեռնվածությունը (կրեդիտային միավորներով), դիմորդներին ներկայացվող պահանջները (նախնական կրթություն, դիպլոմներ, ատեստատներ),

5.2. Շրջանավարտի մասնագիտական գործունեության բնութագիրը (ուրոտներ, օբյեկտներ, մասնագիտական գործունեության խնդիրներ ուսումնադաստիարակչական, մեթոդական, սոցիալ-մանկավարժական, մշակութային-լուսավորչական և կազմակերպչական ոլորտներում):

5.3. Ուսուցման վերջնական արդյունքներին ներկայացվող պահանջները (learning outcomes): Ուսումնամեթոդական, մեթոդական և ուսուցչական գործունեությունը բնորոշող ընդհանուր (գործիքային (ԳԿ), միջանձնային (ՄՁԿ) , համակարգային (ՀԳԿ)) և առարկայական (մասնագիտական) (ԱԿ) **կոմպետենցիաների** ցանկը (Հավելված 4): **Կոմպետենցիաների ձևավորման մեթոդները:**

Քանի որ տվյալ ցանկը լայնորեն կիրառվում է դասընթացների մոդուլների և դրանցից ակնկալվող արդյունքների նկարագրություններում, առաջարկվում է այդ կոմպետենցիաները նշագրել և համարակալել (օրինակ՝ ԳԿ-5, ԱԿ-7, ՀԳԿ-9 և այլն):

5.4. Տվյալ մասնագիտության ընդհանուր բնութագիրը՝ նշվում են շրջանավարտի աշխատելու բնագավառները , պաշտոնները, որը նա կարող է զբաղեցնել, ինչպես նաև այն ընդհանրական պահանջները, որոնք ներկայացվում են շրջանավարտին՝ նրա մասնագիտական գործունեության ոլորտին վերաբերող խնդիրների լուծման համար:

Թվարկվում են նաև տվյալ և հարակից մասնագիտությունների համար անհրաժեշտ գիտելիքները, կարողությունները և հմտությունները, որոնց պետք է տիրապետի շրջանավարտը, կրթությունը շարունակելու հնարավորությունները և ձևերը, ինչպես նաև հարակից մասնագիտությունների (նշել կոնկրետ մասնագիտությունները) բնագավառում շրջանավարտի հարմարվողական հնարավորությունները:

5.5. Մասնագիտության ուսումնական պլան (Հավելված 5):

5.6. Շրջանավարտին ներկայացվող պահանջները՝ ձևակերպված հետևյալ կերպ.

- ինչ պիտի գիտենա շրջանավարտը,
- ինչ պիտի կարողանա շրջանավարտը,
- ինչին պիտի տիրապետի շրջանավարտը:

5.7. Մասնագիտության կրթական ծրագրի մոդուլային կառուցվածքը (աղյուսակի տեսքով):

Նկարագրվում են առանձին մոդուլները և դրանց ուսուցման համար հաշվարկված ուսումնական բեռնվածությունը՝ արտահայտված ECTS կրեդիտային միավորներով, հետևյալ սխեմայով.

- մոդուլի անվանումը,
- դասընթացի անվանումը,
- կրեդիտային միավորների քանակը,
- յուրացվող **կոմպետենցիաները**՝ իրենց նշագրումով և համարակալմամբ՝ համաձայն սույն Ռազմավարության 5.3. կետի:

5.8. Կրթական ծրագրի ուսումնամեթոդական ապահովումը

- **ուսումնական դասընթացի/մոդուլի նկարագրիչ** (Հավելված 6)

- ուսումնական դասընթացի/մոդուլի ուսումնամեթոդական փաթեթը` ըստ հետևյալ սխեմայի (առկա ուսումնամեթոդական փաթեթները վերափոխել` կիրառելով կոմպետենտային մոտեցումը (Հավելված 7))
 - 1) Համառոտ տվյալներ դասախոսի մասին
 - 2) Ուսանողների հետ հետադարձ կապի ապահովումը
 - 3) Դասընթացի նպատակը
 - 4) Կրթական վերջնարդյունքները
 - 5) Դասընթացի ուսումնական քարտեզը
 - 6) Դասախոսությունների նյութերի համառոտագրություններ ըստ շաբաթների
 - 7) Մեկնարկային գրականության ցանկը
 - 8) Ընթացիկ (միջանկյալ) և եզրափակիչ քննությունների բովանդակությունը և միավորների սանդղակը

5.9. Պրակտիկայի ուսումնամեթոդական ապահովումը` պրակտիկայի անցկացման կոնկրետ վայրի, ժամանակացույցի, տեսակների, նպատակների, խնդիրների, ակնկալվող արդյունքների, մեթոդաբանության, կրեդիտների քանակի, մեթոդական ցուցումների, հաշվետվողականության և ամփոփման տեսակների նշումով:

5.10. Պահանջվող կոմպետենցիաների ձևավորման համար անհրաժեշտ ռեսուրսներ

Մարդկային ռեսուրսներ` դասախոսական կազմի որակ, նյութատեխնիկական բազա` սարքավորումներ, լաբորատորիաներ, լինգվաֆոնային կաբինետներ, ինտերնետ-պաշարներ, տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաներ, գրականություն, պարբերականներ, համակարգչային լսարաններ, ուսումնական գործընթացի ապահովման համար անհրաժեշտ ուսումնամեթոդական նյութերի էլեկտրոնային տարբերակներ:

5.11. ՄԿԾ իրականացման համար անհրաժեշտ կրթական տեխնոլոգիաներ և պարապմունքների կազմակերպման ձևեր. սեմինարներ (ուսուցում փոքր խմբերով), խորհրդատվություններ, գործնական պարապմունքներ, ստեղծագործական սեմինարներ (workshops), լաբորատոր պարապմունքներ, ցուցադրական պարապմունքներ (հեռավար խորհրդատվություններ), պրակտիկա, էլեկտրոնային ուսուցում (պարապմունքներ «Open space» մեթոդիկայով), դասախոսություններ, ինտերակտիվ պարապմունքներ (տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառմամբ), նյութերի որոնում և հավաքագրում (ծրագրավորված ուսուցում), գրականության ընթերցանություն և ուսումնասիրում, գրականության վերլուծություն (բանավեճերի անցկացում), գրականության համառոտագրում և ռեֆերատների կազմում, նախագծի նախապատրաստում (գործարար/դերային խաղեր), կարծիքների նախապատրաստում, բանավոր հաղորդումների պատրաստում (շնորհանդես), կուրսային աշխատանքի, էսենների, ավարտական որակավորման աշխատանքների նախապատրաստում, ինքնուրույն աշխատանք, հետազոտությունների անցկացում:

5.12. Արդյունքների գնահատում և ստուգում

- Յուրացված կոմպետենցիաների գնահատման մեթոդները, ձևերը, տեխնոլոգիաները և չափանիշները (ընթացիկ ատեստավորում, վերջնական ատեստավորում, առանձին մոդուլների ատեստավորում, ինքնագնահատում),
- Վերջնական գնահատականի ձևավորման չափանիշները և սկզբունքները,
- Շրջանավարտների վերջնական պետական որակավորման ձևերը,
- Մեթոդական ցուցումներ՝ ուղղված կուրսային և ավարտական որակավորման աշխատանքների կատարմանը և դրանց գնահատման չափանիշներին:

Գրականություն

1. Standards and Guidelines for Quality Assurance in the European Higher Education Area, 2nd Edition, Helsinki, 2007, 38p.
2. Trends in Learning Structures in European Higher Education Area, III. Tuning Report.
3. Ս.Ս. Բաբայան, Ս.Ս.Թումանյան - Սոցիալական գործընկերությունը բուհերի և աշխատաշուկայի միջև՝ որպես նորարարական զարգացման միջոց, Վանաձոր, 2011, էջ 39-50
4. Ա.Ս. Բուդաղյան, Ս.Բ.Կարաբեկյան- Կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված կրթական ծրագրերի կառուցում և իրականացում. Մեթոդական ուղեցույց-Բարձրագույն կրթության ռազմավարական հետազոտությունների ազգային կենտրոն, Երևան, «Թասկ» ՍՊԸ, 2010, էջ 14-18
5. Գ.Կ. Խաչատրյան, Ս.Բ. Կարաբեկյան - «Ուսանողը և ժամանակակից կրթական ծրագիրը» (ուղեցույց ուսանողների համար), Վանաձոր, 2011
6. Որակի ապահովման ներկառուցված համակարգով կրթական ծրագրերի մշակման և իրականացման մեթոդական երաշխավորականներ

Հավելվածներ

1. Ինստիտուտի զարգացման հայեցակարգ (2010-2015թթ), Վանաձոր, 2010, 48 էջ
2. Ֆոկուս-խմբերի անցկացման մեթոդաբանություն
3. Ուսանողների, շրջանավարտների և գործատուների շրջանում սոցիալացումների անցկացման համար նախատեսված հարցաթերթիկներ
4. Կոմպետենցիաների ցանկ
5. Ընթացակարգ ECTS հենքով ՎՊՄԻ-ի կրթական ծրագրերի և մասնագիտությունների ուսումնական պլանների մշակման, հաստատման, մշտադիտարկման և գնահատման
6. «Արաբագիտության արդիական հիմնախնդիրները» դասընթացի նկարագրիչ
7. Մասնագիտության արդիական հիմնախնդիրները (մագիստրոսի կրթական ծրագիր)

